# ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ ԱՊԱՍՏԱՆԱԾ ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԹՎԱՔԱՆԱԿԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ (1914 – 1917թթ.)

Է.Գ.ԴԱՆԻԵԼՅԱՆ

*1914 – 1922թթ. հայ ժողովուրդը Գողգոթա ապրեց: Այս տարիներին պաշտոնական Թուրքիան իրագործեց նախապես բծախնդրորեն մշակած մի ողջ ժողովրդի ցեղասպանությունը: Ի տարբերություն թուրք պետականության նախորդ՝ սուլթանական վարչակարգի երիտթուրքականը դրել էր ընդհանրապես հայ ժողովրդի բնաջնջման հարցը: Եվ պատահական չէ, որ ցեղասպանությունն իր սև ալիքների մեջ էր առել և՛ Արևմտյան Հայաստանը, և՛ Պարսկահայաստանը, և՛ Արևելյան Հայաստանը:*

*Հատկապես ծանր կորուստներ տվեց հայ ժողովրդի արևմտահայ հատվածը: Ցեղասպանությունից փրկված արևմտահայերը դեռևս 1915թ. ծվատվեցին երեք ցաք ու ցրիվ հատվածների: Մի հատվածը, հիմնականում երեխաներ ու երիտասարդ կանայք, մնաց բուն երկրում և մահմեդականացվեց: Ըստ անգլիական «Կապույտ գրքի»՝ նրանց թիվը մոտավորապես 250 հազար էր[1]: Երկրորդ մասն աքսորվեց արաբական անապատներ, իսկ երրորդ հատվածն ապաստան գտավ Կովկասյան ռազմաճակատի շրջանում մասնավորապես Արևելյան Հայաստանում:*

*Պատմագիտական գրականության մեջ Անդրկովկաս անցած արևմտահայ գաղթականության թվաքանակի հարցի շուրջ շրջանառվում են իրարամերժ և հակասական տվյալներ՝ սկսած 300 – 350 հազարից մինչև 650 հազարը: Իսկ որոշ ուսումնասիրողներ էլ միայն Ռուսաստան անցած գաղթականների թիվը հասցնում են 600 հազարի: Նման անճշտությունները ունեն իրենց պատճառները. 1. Բացակայում է գիտական հիմունքներով կատարված վիճակագրությունը: 2. Կապված սովի և համաճարակների, ինչպես նաև Կովկասյան ռազմաճակատի իրավիճակի ու Անդրկովկասի քաղաքական կացության վայրիվերումների հետ՝ գաղթականությունը բավական հոսուն է եղել, չի ունեցել իր մնայուն տեղավայրերը: 3. Որոշ ուսումնասիրողներ «Հայ գաղթականություն» հասկացությունը չփոթել են «արևմտահայ գաղթականություն» հասկացության հետ: Մինչդեռ, առաջին աշխարհամարտի տարիներին Անդրկովկասում և ռուսական զորքերի գրաված վայրերում գոյություն ունեին հայ գաղթականների մի քանի կատեգորիաներ՝ արևմտահայ, պարսկահայ, արևելահայ: Եթե 1914 – 1916թթ. հիմնականում կային հայ գաղթականության երկու կատեգորիաներ (պարսկահայ, արևմտահայ), ապա կապված դեպի Անդրկովկաս թուրքական զորքերի 1918թ. արշավանքի հետ, ամբողջովին սեղահանվում և գաղթականի ցուպն են բռնում նաև Ռուսական կայսրության նախկին հայկական մարզերի՝ Կարսի, Սուրմալուի շրջանի, Նախիջևանի, Ախալքալաքի, Ախալցխայի, ինչպես նաև Թուրքիայի կողմից Հայաստանի Հանրապետությունից նվաճված գավառների հայերը: Այլ խոսքով ասած՝ արդեն գործ ունենք գաղթականության նոր կատեգորիայի՝ արևելահայ գաղթականության հետ: Սկզբնաղբյուրներում 1918թ. համար հայ գաղթականության թիվը ցույց է տրվում 600 հազար, որը*

---

[1] *Տե՛ս Кавказское слово, 2. III. 1917.*

իրականությանը մոտ է: Դրանք հիմնականում արևելահայ գաղթականներն են: Սակայն որոշ ուսումնասիրողներ այս թիվը շրջանառության մեջ են դնում որպես արևմտահայ գաղթականության հսկիչ թիվ:

Ըստ Զ.Գրիգորյանի, «Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին թուրքական յաթաղանից փրկվելով՝ Հյուսիսային Կովկասում, Ուկրաինայում և Ռուսաստանի կենտրոնական մարզերում ապաստան էին գտել հինգ-վեց հարյուր հազար հայ գաղթականներ: Հայ գաղթականների նոր խոշոր հոսանք դեպի Ռուսաստան սկսվեց 1918թ., թուրքական բանակների Արևելյան Հայաստան ներխուժման հետևանքով»[2]: Իսկ Ս.Ալիխանյանը գրում է, որ «Արևմտյան Հայաստանից Անդրկովկաս գաղթած հայերը ցրվեցին նրա գրեթե ամբողջ տերիտորիայում: 650 հազար գաղթականներից Հայաստանում կուտակվեց 400 հազար հոգի, Վրաստանում՝ 150 հազարը»[3]: Ա.Վարդապետյանն իր հերթին պնդում է, թե 600 հազար գաղթականությունն անցել է Խորհրդային Ռուսաստան[4]: Մինչդեռ, աղբյուրները վկայում են, որ 600 հազար գաղթականներից կարողացել էր Հյուսիսային Կովկաս անցնել միայն 150 հազարը, որից 130 հազարը արևելահայ և արևմտահայ գաղթականներ էին, մնացած 20 հազարը՝ հույներ և ասորիներ[5]:

Մասնագիտական գրականության մեջ հանդիպող այս կարգի ոչ ճիշտ վկայությունները հետևանք են այն բանի, որ ցեղասպանությունից փրկված հայ գաղթականության պատմությունը, հատկապես նրա շարժը, հատուկ ուսումնասիրության նյութ չի դաձել: Գաղթականության առաջին հոսքը դեպի ռուսական Իասեն կատարվեց Քյոփրի-քյոյից ռուսների նահանջից հետո (1914թ. նոյեմբերի 22 – 24): Գաղթականներին տեղավորեցին սահմանամերձ շրջանների հայկական գյուղերում[6]: Գաղթականության համեմատաբար ավելի ուժեղ ալիքը առաջացավ Սարիղամիշի հայտնի օպերացիայի ժամանակ՝ 1914թ. դեկտեմբերի 19 – 22-ին: Ճիշտ է, ռուսներին հաջողվեց Սարիղամիշի մոտ կանգնեցնել թուրքերի հակահարձակումը, ջախջախել նրանց և մինչև հունվարի 5-ը վերականգնել իրենց նախկին դիրքերը, սակայն ռուսական զորքերի դեկտեմբերյան ժամանակավոր նահանջը մեծ խուճապ էր առաջացրել Պարսկահայքի, Ատրպատականի, Կարսի, մասամբ նաև Արևմտյան Հայաստանի սահմանամերձ որոշ շրջանների բնակչության մեջ, որի հետևանքով տասնյակ հազարավոր գաղթականներ, թողնելով իրենց բնակավայրերը, շարժվեցին Արևելյան Հայաստան: Գաղթել էին ոչ միայն հայերը, այլև ասորիները և հույները: Փախստականների թիվը

[2] Զ.Գրիգորյան, Հայ և ռուս ժողովուրդների դարավոր բարեկամությունը, Ե., 1967, էջ 118:

[3] Ս.Ալիխանյան, Հայկական գործերի կոմիսարիատի գործունեությունը (1917 – 1921), Ե., 1956, էջ 112:

[4] Տե՛ս Ս.Վարդապետյան, Հայաստանի օգնության կոմիտե (1921 – 1937), Ե., 1966, էջ 19:

[5] Տե՛ս ՀՀ Նորագույն պատմության պետական կենտրոնական արխիվ, ֆ. 123, ց. 42, գ. 2, թ. 49:

[6] Տե՛ս Отчет о деятельности состоящих при Кавказском армянском благотворительном обществе армянского центрального комитета помощи пострадавшим от войны, Тифлис, 1917, с. 3 (այսուհետև՝ Отчет при КАБО АЦК...): Տե՛ս նաև ՀՀ Պատմության կենտրոնական պետական արխիվ (այսուհետև՝ ՀՀ ՊԿՊԱ), ֆ. 28, ց. 1, գ. 132, թ. 30:

1914թ. վերջերին – 1915թ. սկզբներին հասնում է 100.000-ի[7], որից հույներինը՝ 20 հազար[8], ասորիներինը՝ 20 հազար[9]:

Հարկ է նշել, որ հայերի կոտորածները սկսվեցին 1914թ. վերջերից՝ երիտթուրքական հանցախմբի 1915թ. ապրիլի 15-ի տխրահռչակ հրահանգից ամիսներ առաջ, և նրա առաջին զոհերը դարձան Թուրքիայի քաղաքացի չհանդիսացող պարսկահայերը, ասորիները և Կարսի մարզի արևելահայերը: Ջարդերը կատարվում էին աներևակայելի դաժան մեթոդներով. կատարողը թուրքն էր, հետևաբար՝ թուրքավարի: Հետևաբար, միանգամայն սին են թուրք պատմագիտության այն պնդումները, թե արևմտահայերը՝ որպես օսմանյան քաղաքացիներ, օրինապահ չգտնվեցին, որի հետևանքով էլ տեղի ունեցան նրանց տեղահանությունն ու ջարդերը: Ռուսական բանակի հաջող ռազմական գործողությունները հնարավորություն տվեցին, որ փախստականները 1915թ. գարնանից վերադառնան իրենց բնակավայրերը:

Գաղթականության երրորդ՝ ամենամեծ շարժը, տեղի ունեցավ ռուսական Կովկասյան բանակի 1915թ. հուլիսյան նահանջից հետո: Հայտնի է, որ Սարիղամիշի մոտ թուրքերի ծանր պարտությունից հետո ռուսները 1915թ. գարնանն անցնում են հակահարձակման և այսպես կոչված «Ալաշկերտի օպերացիայի» ընթացքում մեկը մյուսի ետևից գրավում են Թավրիզը, Ուրմիան և շարժվելով Ալաշկերտի հովտով՝ թուրքերից ազատագրում են Ալաշկերտը, Բաշկալեն, Մանազկերտը, Շատախը, Արճեշը, Կոտուրը, Վանը, որից հետո հարձակման սլաքն ուղղում են Մուշի և Բիթլիսի վրա:

Սակայն, 1915թ. հուլիսի կեսին կատարվեց ռուսական բանակի երրորդ անակնկալ նահանջը, որի հետևանքով թուրքերը վերանվաճեցին Արևմտյան Հայաստանի մեծ մասը և Հասան Կաղզվանի հարավային մատույցները: Ճիշտ է, մի քանի օր հետո ռուսները անցնում են հակահարձակման և մինչև 1915թ. հուլիսի 29-ը դուրս են գալիս նախկին բնագծերը, սակայն նրանց հերթական նահանջն աղետալի հետևանք ունեցավ մեր ժողովրդի պատմական ճակատագրում:

Ռուսական զորքերի խորհրդավոր նահանջին հետևեց Վանի, Բիթլիսի ու Էրզրումի վիլայեթների, մասամբ Պարսկահայքի հայերի խիստ անկազմակերպ և քաոսային գաղթը: Եթե ռազմական գործողությունների Արևմտյան ճակատում ցարական իշխանությունները, մինչև նահանջը, նախապես հայտնում էին բնակչությանը և պետականորեն կազմակերպում բնակչության գաղթը, ապա նույն բանը չկատարվեց Կովկասյան ռազմաճակատում: Այստեղ, որպես կանոն, ռուսական բանակների նահանջը խիստ գաղտնի էր պահվում և բնակչության շրջանում նախազգուշական ոչ մի միջոցառում չէր ձեռնարկվում[10]: Մինչդեռ, ցարական իշխանություններին քաջ հայտնի էր, թե ինչ էր սպասվելու հայերին նահանջից հետո:

Արևմտահայ փախստականներն Արևելյան Հայաստան էին անցնում երեք ուղղություններով՝ Կարսի, Իգդիրի, և Ջուլֆայի: Կարսի գծով անցել էին 19.418 փախստականներ: Նրանք հիմնականում թուրքական Բասենի բնակիչներն էին: Իգդիրի գծով անցել էին Բիթլիսի, Մշո, Վանի, Մանազկերտի, Պատնոսի, Այնթապի, Աբաղայի, Ալաշկերտի շրջաններից՝ 170.000 փախստականներ: Ջուլֆայի գծով՝

[7] Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 28, ց. 1, գ. 109, թ. 165: Մշակ, 4.I. 1915:
[8] Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 28, ց. 1, գ. 117, թ. 2:
[9] Տե՛ս Մշակ, 11. I. 1915:
[10] Տե՛ս Համբավաբեր, 3. IV. 1916:

Աղբակի և Պարսկաստանի այլ շրջաններից ռուսական սահմանը հատել էին 18.055 փախստականներ: Այսպիսով, արևմտահայ և պարսկահայ փախստականների թիվը կազմում էր շուրջ 207.473: Բացի այդ, կային նաև 7.320 արևելահայ փախստականներ, որոնք գաղթել էին Օլթիի, Արդանուշի, Արդվինի, Արդահանի շրջաններից: Հարկ է նշել, որ այդ ժամանակ Վանի շրջանից Պարսկաստան էին անցել և այնտեղ էին գտնվում 10.000 փախստականներ և 3.500 որբեր[11]: Այսպիսով, հայ փախստականների ընդհանուր թիվը 1915թ. ամռանը (Անդրկովկասում և Պարսկաստանում) 228.293 էր, որից շուրջ 200.000-ը արևմտահայ փախստականներ էին, մնացյալը՝ պարսկահայ և արևելահայ փախստականներ:

Գաղթականությունը չափազանց հոսուն զանգված էր և անընդհատ գտնվում էր շարժման և տեղափոխությունների մեջ: Այդ պատճառով էլ գաղթականների ընդհանուր թվաքանակի վերաբերյալ համեմատաբար հավաստի տեղեկություններ են տալիս և գիտական մեծ արժեք ունեն մեկօրյա վիճակագրությունները: Կովկասում գաղթականների գործերի գլխավոր լիազոր գեներալ-մայոր Վ.Թամամշյանի հանձնարարությամբ, պետական գանձարանի հաշվին, Հայկական կենտրոնական կոմիտեն 1916թ. հունվարի 14-ին կատարեց գաղթականների համընդհանուր մեկօրյա ցուցակագրություն, որին մասնակցեցին ավելի քան 700 հոգի:

Գաղթականների մեկօրյա հաշվառումից դուրս էին մնացել մոտ 31.000 հոգի: Այդ թվում՝ 1000 որբեր՝ ապաստարաններում, 12000 հոգի՝ Վանի վիլայեթում, 10000 հոգի՝ Բիթլիսի վիլայեթում, 1000 հոգի՝ Էրզրումի վիլայեթում, 4000-ը՝ Բաքվում, 1000-ը՝ Ախալքալաքում:

Աղյուսակ 1. Հայ գաղթականների ընդհանուր թիվը, սեռը, տարիքը՝ ըստ 1916թ. հունվարի 14-ի մեկօրյա հաշվառման

| Նահանգներ | Կայան մեկ թիվը | Ընտանիքների թիվը | Հասակ | | | Սեռ | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | մինչև 5 տարեկան | 5-16 տարեկան | 16 տարեկանից բարձր | ընդհանուր թիվը | արական | իգական |
| Երևանի | 263 | 20394 | 8938 | 28831 | 55159 | 92928 | 45705 | 47223 |
| Թիֆլիսի | 14 | 3191 | 1549 | 3750 | 7951 | 13250 | 6532 | 6718 |
| Գանձակի | 51 | 2279 | 352 | 1996 | 4237 | 6585 | 3380 | 3205 |
| Կարսի | 90 | 2305 | 1717 | 2964 | 5643 | 10324 | 5411 | 4913 |
| Պարսկաստան | 24 | 2408 | 925 | 3195 | 6334 | 10454 | 4022 | 6432 |
| Էրզրումի վիլայեթ | 47 | 4551 | 2470 | 5349 | 12499 | 20318 | 10059 | 10259 |
| Ընդամենը | 489 | 35128 | 15951 | 46085 | 91823 | 153859 | 75109 | 78750 |

Այսպիսով, հայ գաղթականների ընդհանուր թիվը, ըստ 1916թ. մեկօրյա ցուցակագրության, կազմում էր 184.859[12]:

---

[11] Տե՛ս Համբավաբեր, 3. I. 1916:

[12] Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 28, ց. 1, գ. 132, թ. 30:

*Աղյուսակ 2. Որտեղից են գաղթել փախստականները (ըստ 1916թ. հունվարի 14-ի մեկօրյա ցուցակագրության)*[13]

| Բնակության վայրերը տեղահանությունից հետո | Բնակության վայրերը մինչև տեղահանությունը | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Թուրքիա | | | | | | | Պարսկաստան | Ռուսաստան | |
| | Էրզրումի վիլայեթ | Վանի վիլայեթ | Բիթլիսի վիլայեթ | Մամրեշի գավառակ | Թելկեփերի գավառակ | Դիարբեքիրի վիլայեթ | Ս.Պոլիս | Ատրպատականի նահանգ | Կարսի նահանգ | Բաքուի նահանգ |
| Երևանի նահանգ | 2956 | 11957 | 5174 | 4 | 4 | 6 | 1 | 114 | 176 | 2 |
| Թիֆլիսի | 686 | 1041 | 1367 | | | 4 | 2 | 27 | 50 | 14 |
| Գանձակի | 27 | 1667 | 585 | | | | | | | |
| Կարսի | 864 | 662 | 625 | | | | | 72 | 73 | 9 |
| Պարսկաստան | 177 | 1196 | 283 | | | | | 752 | | |
| Էրզրումի վիլայեթ | 1556 | 2063 | 931 | | | 1 | | | | |
| Ընդամենը | 6266 ընտ. | 18586 – | 8965 – | 4 – | 4 – | 11 – | 3 – | 965 – | 299 – | 25 – |

*Որոշակի հետաքրքրություն են ներկայացնում աղյուսակ 2-ում ամփոփված տվյալները: 1. Ի տարբերություն գաղթականության առաջին շարժի (1914թ. դեկտեմբեր), փախստականների երկրորդ հոսքի ճնշող մեծամասնությունը եղել են արևմտահայերը՝ 96,8 %: 2. Փախստականների ամենամեծ խումբը կազմում էին Վանի վիլայեթի հայերը՝ 52,9 % (18.586 ընտանիք), երկրորդ խումբը՝ բիթլիսցիները (25,5 % կամ 8.965 ընտանիք), երրորդ խումբը՝ Էրզրումի վիլայեթի հայերը (17,8 % կամ 6.266 ընտանիք): 3. Արևմտյան Հայաստանի մյուս վիլայեթներից (Խարբերդ, Սվազ, Դիարբեքիր), Անդրկովկասում և Ռուսաստանի նվաճած երկրամասերում ըստ էության գաղթականներ չկային (ընդամենը՝ 19 ընտանիք): Վերոհիշյալ վիլայեթների հայերը կամ ոչնչացվել էին կամ էլ տարագրվել արաբական անապատները: 4. Գաղթականների գլխավոր ապաստանը Երևանի նահանգն էր՝ 58 % (20.394 ընտանիք):*

*Չնայած իր որոշ թերություններին՝ 1916թ. մեկօրյա վիճակագրությունը համեմատաբար ավելի հիմնավոր աղբյուր է, քան դրանից առաջ և հետո կատարված վիճակագրությունները: Այն լույս է սփռում ոչ միայն փախստականների թվաքանակի, կազմի, շարժի, զբաղմունքի, բնակության վայրերի, կրած նյութական վնասների, այլև գաղթի ընթացքում և դրանից հետո նրանց ֆիզիկական կորուստների մասին: Հաշվառման արդյունքը բավական տխուր պատկեր ունի: Փախստականները տվել էին շուրջ 70.000 զոհ, որից 20.000-ը սպանվել էին գաղթի ընթացքում թուրքական բանակի և քրդական զինվորական կազմավորումների հարձակումներից, 50.000-ը զոհ էին գնացել սովին և համաճարակին՝ 1915թ. հուլիս – 1916թ. հունվար ընկած միջոցում:*

[13] Նույն տեղում, թ. 32:

*Աղյուսակ 3. Փախստականների տված զոհերի քանակը (թուրքերի կողմից սպանվածներ, սովից և համաճարակներից մահացածներ)*[14]

| Նահանգներ | Ընտանիքների թիվը | Հոգի | Ընտանիքից հեռացածներ | | |
|---|---|---|---|---|---|
| | | | մեռածների թիվը | սպանվածների թիվը | ընդամենը |
| Երևանի | 20394 | 92928 | 32875 | 14344 | 47219 |
| Թիֆլիսի | 3191 | 13250 | 969 | 589 | 1558 |
| Գանձակի | 2279 | 6585 | 9720 | 1622 | 11342 |
| Կարսի | 2305 | 10324 | 16 | | 16 |
| Պարսկաստան | 2408 | 10454 | 723 | 524 | 1247 |
| Էրզրումի վիլայեթ | 4551 | 20318 | 5225 | 2500 | 7725 |
| Ընդամենը | 35128 | 153859 | 49528 | 19579 | 69107 |

Առհասարակ շատ մեծ է եղել Կովկասի հայոց բարեգործական ընկերությանը կից Հայկական կենտրոնական կոմիտեի դերը գաղթականների ընդունման, տեղավորման, պարենավորման և բուժսպասարկման, հետագայում հայրենադարձության կազմակերպման, ինչպես նաև հայ որբերի պահպանման և նրանց կրթական գործի կազմակերպման բնագավառներում, որը, անշուշտ, առանձին ուսումնասիրության նյութ է:

Հիմնահարցի գիտական ուսումնասիրման տեսակետից մեզ հետաքրքրողն այն փաստն է, որ սկսած 1916թ. մայիսից ոչ միայն Անդրկովկասի, այլև Կովկասյան ռազմաճակատի շրջանում գտնվող բոլոր ազգությունների փախստականների օգնության գործը հանձնարարված էր Կովկասի հայոց բարեգործական ընկերությանը: Որոշ ուսումնասիրողներ Կովկասի հայոց բարեգործական ընկերության հաշվետվություններում գաղթականության թվաքանակի վերաբերյալ շրջանառության մեջ դրված հսկիչ թվերի տակ տեսնում են միայն հայ գաղթականներին, որը չի համապատասխանում իրականությանը, և, անշուշտ, անտեղյակության արդյունք է: Ահա թե ինչ է գրում Հ. Էլչիբեկյանը՝ խոսելով Հայաստանում 1917թ. փետրվարյան հեղափոխության շրջանում ստեղծված կացության մասին. «Պատերազմի տարիներին թուրքական յաթաղանից ազատվելու համար Արևմտյան Հայաստանից Անդրկովկաս գաղթեց մոտ 300 հազար հայ»[15], որից հետո հարգարժան գիտնականը հղում է Կովկասյան հայոց բարեգործական ընկերության 1917թ. հաշվետվությունը:

Մեր վերլուծությունները և գաղթականության թվակազմի վերաբերյալ տրված աղյուսակները ցույց են տալիս, որ Անդրկովկասում երբեք 300 հազար արևմտահայ գաղթական չի եղել: Պարզապես այդ թվաքանակում արտացոլված է ոչ միայն հայ, այլև մյուս ազգությունների (հույն, ասորի, մուսուլման) գաղթականների թվակազմը: Որ դա այդպես է, երևում է Կովկասի հայոց

[14] Նույն տեղում, թ. 35:

[15] Հայ ժողովրդի պատմություն, հ. VI, Ե., 1981, էջ 614:

*բարեգործական ընկերության 1917թ. սեպտեմբերի 15-ի զեկուցագրից՝ ուղղված Կովկասյան ռազմաճակատի փախստականների տեղավորման խորհրդի գործադիր կոմիտեին: Այնտեղ ասվում է. «Կովկասյան ռազմաճակատի գաղթականների կենսամթերքով մատակարարումը 1916թ. մայիսից հանձնարարված է Կովկասի հայոց բարեգործական ընկերությանը: Այդ ձեռնարկի ֆինանսավորման համար տարբեր ժամանակներում հիշյալ Ընկերության գանձարանից բաց է թողնվել 1.600.000 ռուբլի: Անդրկովկասում, Թուրքիայի և Պարսկաստանի գրված մարզերում Ընկերության կողմից մինչև հիմա բացված են 40 պարենային պահեստներ:* Ընկերության նշված պահեստներից առաջին անհրաժեշտության ապրանքներով մատակարարվող բոլոր ազգությունների գաղթականների թիվը հասնում է մինչև 300.000 մարդու»[16]:

*Ասված է պարզ և որոշակի. Կովկասի հայոց բարեգործական ընկերության խնամքի տակ էին գտնվում ոչ միայն Անդրկովկասում ապաստանած, այլ նաև Արևմտյան Հայաստանում և Պարսկաստանի հյուսիսում ռուսական զորքերի կողմից նվաճված մարզերի բոլոր ազգությունների գաղթականները: Աղյուսակ 4-ը պատկերացում է տալիս Կովկասյան ռազմաճակատի շրջանում (Անդրկովկաս, Արևմտյան Հայաստան, Ատրպատական) 1917թ. օգոստոսի տվյալներով առկա եզդի, մուսուլման, քուրդ և թուրք գաղթականների թվակազմի վերաբերյալ:*

*Աղյուսակ 4. Մուսուլման, եզդի, քուրդ, և թուրք գաղթականների թվակազմը*

| *Մարզը, նահանգը, շրջանը* | *Եզդի* | *Մուսուլ-մաններ* | *Քրդեր* | *Թուրքեր* | *Ընդա-մենը* |
|---|---|---|---|---|---|
| *Բաթումի մարզ* | – | 4417 | – | – | 4417 |
| *Կարսի մարզ* | – | 12596 | – | – | 12596 |
| *Թիֆլիսի նահանգ* | – | 98 | – | – | 98 |
| *Ելիզավետպոլի նահանգ* | – | 202 | – | – | 202 |
| *Երևանի նահանգ* | – | 90 | 9796 | – | 9886 |
| *Խորասանի շրջան* | – | – | – | 135 | 135 |
| *Բայազետի և Դիադինի շրջան* | 4549 | 25 | 3142 | – | 6709 |
| *Վանի* | – | 191 | – | – | 191 |
| *Էրզրումի* | – | 1440 | 48 | – | 1488 |
| *Ղարաքիլիսայի* | – | – | 358 | – | 358 |
| *Տրապիզոնի* | – | 7088 | – | – | 7088 |
| *Դիլմանի* | – | 843 | – | – | 843 |
| *Ընդամենը* | 4549 | 26990 | 13344 | 135 | 45011 |

[16] *ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 28, ց. 1, գ. 680, թ. 15 (ընդգծումը մերն է - Է.Դ.):*
[17] *Նույն տեղում, թ. 21:*

1917թ.[17]

Կարծում ենք, որ հետագա տարիներին արևմտահայ գաղթականության թիվն Անդրկովկասում չէր կարող ավելին լինել, որովհետև Անդրկովկասում ապաստանած արևմտահայ փախստականներից շուրջ 150 հազարը 1917թ. հայրենաղարձվեցին Արևմտյան Հայաստան: Թուրքական զորքերի 1918թ. արշավանքի ընթացքում նրանց մի մասը փախավ Անդրկովկաս, իսկ մյուս մասը (շուրջ 50 հազար՝ հիմնականում Վասպուրականի շրջանում հավաքվածներից), վերջապահ մարտերով, անցավ Պարսկաստան՝ անգլիացիներին միանալու նպատակով (հետագայում սրանց մի մասը կազմեց այսպես կոչված Բաքուբայի գաղթականությունը):

Այսպիսով, պատմագիտության մեջ արևմտահայ գաղթականության թվաքանակի շուրջ շրջանառված հակասական տվյալները հետևանք են այն բանի, որ ցեղասպանությունից փրկված արևմտահայ բռնագաղթյալների և փախստականների ամբողջական պատմությունն անբավարար է ուսումնասիրված, իսկ հիմնահարցի առանձին կողմեր, մասնավորապես արևմտահայ գաղթականության՝ իրականությանը մոտ թվաքանակի ճշտումը ուսումնասիրողների տեսադաշտից դուրս է մնացել: Ճշտել արևմտահայ գաղթականության թիվը, նշանակում է ճշտել ցեղասպանության զոհերի թիվը: Սա կարևորվում է նրանով, որ ժամանակակից Թուրքիայում պետական քարոզչության բոլոր միջոցները, փորձելով ժխտել հայոց ցեղասպանությունը, այդ նպատակով վիճարկում են նաև զոհերի թիվը:

## К ВОПРОСУ О ЧИСЛЕННОСТИ ЗАПАДНОАРМЯНСКИХ БЕЖЕНЦЕВ В ЗАКАВКАЗЬЕ (1914 – 1917 гг.)

Э.Г.ДАНИЕЛЯН

Резюме

На основе достоверного статистического материала сделана попытка уточнить реальное число западноармянских беженцев, нашедших убежище в районах дислокации войск Кавказского фронта и в Закавказье. Некоторые исследователи в общую численность беженцев из Западной Армении включали как восточноармянских беженцев, так и беженцев-армян из Персии.